ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 6/3

12 ապրիլի 2024 թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 30 անդամներ:
Բացակա էին՝ Կալիպսե Ասատրյանը, Վահան Հունանյանը, Հարություն Նիկողոսյանը:
Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Վարդգես Սամսոնյանը:
Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Կարեն Բաղալյանը:
ԼՍԵՑԻՆ

1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՎԵՑԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԵՐՐՈՐԴ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ
(Զեկ. ՎԱՐԴԳԵՍ ՍԱՄՍՈՆՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**
Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու վեցերորդ նստաշրջանի հերթական երրորդ նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

Կողմ-24 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 64-Ա)*
ԼՍԵՑԻՆ

2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԹՎՈՎ 5 (ՀԻՆԳ) ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ
(Զեկ. ԼԵՆԱ ՋԻԼԱՎՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2017 թվականի նոյեմբերի 06-ի N 119-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 10-րդ և 11-րդ կետերի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի թվով 5 (հինգ) համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների (այսուհետ՝ կազմակերպություններ) տնօրենների գրություններն՝ ուղղված Գյումրի համայնքի ղեկավարին (Գյումրու համայնքապետարան մուտքագրված՝ 2024 թվականի մարտի 07-ին N 4599, մարտի 19-ին N 5208, մարտի 27-ին N 5776, մարտի 28-ին N 5896 և 2023 թվականի դեկտեմբերի 12-ին N 26815 թվագրություններով)՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**
զմակերպություններին գույքի և ընթացիք վերանորոգման համար շինանյութերի ձեռքբերման նպատակով, որպես նվիրատվություն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի

համայնքի 2024 թվականի (4819) «Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին» տնտեսագիտական դասակարգման հոդվածից հատկացնել 1 763 000 (մեկ միլիոն յոթ հարյուր վաթսուներեք հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:
2.Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ-գլխավոր ֆինանսիստին սույն որոշման 1-ին կետում նշված գումարների հատկացումը կատարել համապատասխան գործառական դասակարգմանը՝ համաձայն հավելվածի՝ օրենքով սահմանված կարգով:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կազմակերպության տնօրեններին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ-26 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 65-Ա)*

ԼՍԵՑԻՆ

3. ***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԹՎՈՎ 2 (ԵՐԿՈՒ) ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

(Զեկ. ԼԵՆԱ ՋԻԼԱՎՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2017 թվականի նոյեմբերի 06-ի N 119-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 10-րդ և 11-րդ կետերի դրույթներով՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**
1.Կազմակերպություններին անվտանգության համակարգի տեղադրման և տարեկան սպասարկման համար, որպես նվիրատվություն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2024 թվականի (4819) «Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին» տնտեսագիտական դասակարգման հոդվածից հատկացնել 665 000 (վեց հարյուր վաթսունհինգ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:
2.Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ-գլխավոր ֆինանսիստին սույն որոշման 1-ին կետում նշված գումարների հատկացումը կատարել համապատասխան գործառական դասակարգմանը՝ համաձայն հավելվածի՝ օրենքով սահմանված կարգով: 3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կազմակերպության տնօրեններին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ-25 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 66-Ա)*

ԼՍԵՑԻՆ

4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ «ԳՈՀՍԱՐ-ՄՍՈՒՐ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԼԵՆԱ ՋԻԼԱՎՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2017 թվականի նոյեմբերի 06-ի N 119-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 10-րդ և 11-րդ կետերի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքի «Գոհար-մսուր մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ կազմակերպություն) տնօրեն Ս.Հարությունյանի գրությունն՝ ուղղված Գյումրի համայնքի ղեկավարին (Գյումրու համայնքապետարան համապատասխանաբար մուտքագրված՝ 2024 թվականի մարտի 29-ին N 5927 թվագրմամբ)՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**
1.Կազմակերպությանը որպես նվիրատվություն հատկացնել 900 000 (ինը հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ վնասված հին մալուխները նորով փոխարինելու համար:

2.Հանձնարարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ-գլխավոր ֆինանսիստին սույն որոշման 1-ին կետում նշված գումարներ հատկացումը կատարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2024 թվականի բյուջեի 9/6/1 գործառական դասակարգման (4819) «Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կազմակերպության տնօրեն Ս.Հարությունյանի պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ-26 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 67-Ա)*

ԼՍԵՑԻՆ

5. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ «ԱՆԻ ՓՈՂԱՅԻՆ ՆՎԱԳԱԽՈՒՄԲ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԼԵՆԱ ՋԻԼԱՎՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2017 թվականի նոյեմբերի 06-ի N-119-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 10-րդ և 11-րդ կետերի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի «Անի փողային նվագախումբ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ կազմակերպություն) տնօրենի գրությունը՝ ուղղված Գյումրի համայնքի ղեկավարին (Գյումրու համայնքապետարան մուտքագրված՝ 2024 թվականի ապրիլի 4-ին N 6040 թվագրության)՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1. Կազմակերպությանը, որպես նվիրատվություն հատկացնել 1 528 800 (մեկ միլիոն հինգ հարյուր քսանութ հազար ութ հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ՝ անձնակազմի համար թվով 39 (երեսունինը) համազգեստ ձեռքբերելու նպատակով:
2.Հանձնարարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ-գլխավոր ֆինանսիստին սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2024 թվականի բյուջեի 8/2/3 գործառական դասակարգման (4819) «Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կազմակերպության տնօրենին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ-29 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 68-Ա)*

ԼՍԵՑԻՆ

6. ԳՅՈՒՄՐՈՒ «ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԼԵՆԱ ՋԻԼԱՎՅԱՆ)

Գյումրու «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» հասարակական կազմակերպությունը իրականացնում է սակավ հնարավորություններով պատանիների և երիտասարդների ոչ ֆորմալ կրթության և զարգացման գործունեության ծրագիր: Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 10-րդ հոդվածի

11-րդ մասով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2017թվականի նոյեմբերի 06-ի N 119-Նորոշման 1-ին կետով հաստատված կարգի 10-րդ և 11-րդ կետերի դրույթներով և հիմք ընդունելով Գյումրու «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ կազմակերպություն) նախագահ Արթուր Նաջարյանի համայնքի ղեկավարին ուղղված գրությունները (համայնքապետարանում մուտքագրված՝ 2024 թվականի փետրվարի 26-ին և մարտի 21-ին N 3846 5436 թվագրություններով)՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1.Կազմակերպությանը, որպես նվիրատվություն 2024 թվականի համար հատկացնել 4275 600 (չորս միլիոն երկու հարյուր յոթանասունհինգ հազար վեց հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ՝ 2024 թվականի՝ մայիս ամսից մինչև դեկտեմբեր ամիսը յուրաքանչյուր ամիս հատկացնել 534 450 (հինգ հարյուր երեսունչորս հազար չորս հարյուր հիսուն) Հայաստանի Հանրապետության դրամ «Գյումրու երիտասարդների տուն» բաց երիտասարդական կենտրոնի անխափան ու շարունակական գործունեություն ծավալելու համար:

2. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ-գլխավոր ֆինանսիստին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2024 թվականի բյուջեի 8/4/2 գործառական դասակարգման (4819) «Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կազմակերպություն նախագահ Արթուր Նաջարյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ-30 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 69-Ա)*

ԼՍԵՑԻՆ

7. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ «ԼԻԼԻԹ-ՄՍՈՒՐ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ԵՎ «ԵՐԱԶԱՆՔ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԼԵՆԱ ՋԻԼԱՎՅԱՆ)

«Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպությունը, կարևորելով երեխայի վաղ զարգացման վրա մեծ ազդեցություն ունեցող առողջ սնունդն ու երեխաների անվտանգության ապահովումը, «Լիլիթ-մսուր մանկապարտեզ» և «Երազանք մանկապարտեզ» համայնքային ոչ առեվտրային կազմակերպություններում (այսուհետ՝ կազմակերպություններ) իրականացնում է «Մեծանալ առողջ» ծրագիրը: Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2017 թվականի նոյեմբերի 06-ի N 119-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 10-րդ և 11-րդ կետերի դրույթներով, հիմք ընդունելով «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության գործադիր տնօրեն Գագիկ Տարասյանի գրությունն ուղղված Հայաստանի Հանրապետության Գյումրի համայնքի ղեկավարին (համայնքապետարանում մուտքագրված՝ 2023 թվականի նոյեմբերի 06-ին N 23969 թվագրմամբ)՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1.Կազմակերպություններին որպես համաֆինանսավորում հատկացնել յուրաքանչյուրին 1 000 000 (մեկ միլիոն) Հայաստանի Հանրապետության դրամ «Մեծանալ առողջ» ծրագրի իրականացման համար:

2.Հանձնարարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ-գլխավոր

ֆինանսիստին սույն որոշման 1-ին կետում նշված գումարներ հատկացումը կատարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2024 թվականի բյուջեի 9/6/1 գործառական դասակարգման (4819) «Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կազմակերպությունների տնօրեններ Լ.Մանուկյանին և Ա. Ավետիսյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ-30 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 70-Ա)*

ԼՍԵՑԻՆ

8. ՄԱՅԻՍՅԱՆ ՏՈՆԵՐԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԼԵՆԱ ՋԻԼԱՎՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 10-րդ հոդվածի 11-րդ մասով, Գյումրի համայնքի ավագանու 2017թվականի նոյեմբերի 06-ի N119-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 7-րդ կետի 3-7-րդ ենթակետերի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության Շիրակի մարզի տարածքային ստորաբաժանման ղեկավարի պարտականությունները կատարող փոխգնդապետ Ի.Գրիգորյանի՝ Գյումրի համայնքի ղեկավարին ուղղված գրությանը կից ներկայացրած ցուցակները (համայնքապետարանում մուտքագրված 2024 թվականի ապրիլի 02-ին N 6129 թվագրությունով)՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1. Հատկացնել դրամական օգնություն ներքոգրյալ ընտանիքներին և անձանց. 1)Արցախյան պատերազմում (1991-1994թվականներին) զոհված թվով 104 (մեկ հարյուր չորս) ազատամարտիկների ընտանիքներից յուրաքանչյուրին՝ 20 000 (քսան հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, ընդամենը՝ 2 080 000 (երկու միլիոն ութսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ համաձայն N1 հավելվածի, 2)զոհված (մահացած) թվով 315 (երեք հարյուր տասնհինգ) զինծառայողների ընտանիքներից յուրաքանչյուրին՝ 20000 (քսան հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, ընդամենը՝ 6 300 000 (վեց միլիոն երեք հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ համաձայն N 2 հավելվածի, 3)1956 թվականի հոկտեմբերին Հունգարիայի հեղաշրջման ճնշմանը մասնակից թվով 4 (չորս) վետերաններից յուրաքանչյուրին՝ 15 000 (տասնհինգ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, ընդամենը՝ 60 000 (վաթսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ համաձայն N3 հավելվածի, 4)2020 թվականի սեպտեմբերի 27-ից նոյեմբերի 10-ը ներառյալ Արցախի Հանրապետությունում ծավալված մարտական գործողությունների ժամանակ անհայտ կորած համարվող թվով 5 (հինգ) զինծառայողների ընտանիքներին՝ յուրաքանչյուրին 20 000 (քսան հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, ընդամենը՝ 100 000 (հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ համաձայն N4 հավելվածի, 5)Աֆղանստանի պատերազմի 73 (յոթանասուներեք) մասնակիցներից յորաքանչյուրին՝ 10 000 (տաս հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, ընդամենը՝ 730 000 (յոթ հարյուր երեսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ համաձայն N5 հավելվածի:
2.Հանձնարարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ-գլխավոր ֆինանսիստին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2024 թվականի բյուջեի 10/4/1 գործառական դասակարգման (4729) «Այլ նպաստներ բյուջեից» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-28 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 71-Ա)*

ԼՍԵՑԻՆ

9. ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԹՎՈՎ 106 ԱՆՁԱՆՑ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԼԵՆԱ ՋԻԼԱՎՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 10-րդ հոդվածի 11-րդ մասով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2017 թվականի նոյեմբերի 06-ի N 119-Նորոշման 1-ին կետով հաստատված կարգի 7-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով սոցիալապես անապահով թվով 106 (մեկ հարյուր վեց) քաղաքացիների՝ Գյումրի համայնքի ղեկավարին ուղղված դիմումները՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1.Թվով 106 (մեկ հարյուր վեց) անձանց որպես դրամական օգնություն հատկացնել 1400 000 (մեկ միլիոն չորս հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ համաձայն հավելվածի:

2.Հանձնարարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ- գլխավոր ֆինանսիստին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2024 թվականի բյուջեի 10/7/1 գործառական դասակարգման (4729) «Այլ նպաստներ բյուջեից» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-21 Դեմ-0 Ձեռնպահ-4

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 72-Ա)*

ԼՍԵՑԻՆ

10. ««ԲԱՐԵԿԱՄ» ՄՇԱԿՈՒՅԹԻ, ԱՐՎԵՍՏԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԼԵՆԱ ՋԻԼԱՎՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 10-րդ հոդվածի 11-րդ մասով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2017 թվականի նոյեմբերի 06-ի N 119-Նորոշման 1-ին կետով հաստատված կարգի 10-րդ և 11-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով ««Բարեկամ» մշակույթի, արվեստի և սպորտի զարգացման կենտրոն» հասարակական կազմակերպության նախագահ Ս. Հայրապետյանի Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարին ուղղված գրությունը՝ (համայնքապետարանում մուտքագրված 2024 թվականի մարտի 29-ին N 5955 թվագրմամբ)՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1.««Բարեկամ» մշակույթի, արվեստի և սպորտի զարգացման կենտրոն» հասարակական կազմակերպությանը՝ որպես նվիրատվություն, հատկացնել 250 000 (երկու հարյուր հիսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ Հայաստանի Հանրապետության մշակույթի վաստակավոր գործիչ Մուրադ Մալխասյանի մասին ֆիլմի նկարահանման համար:

2.Հանձնարարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ-գլխավոր ֆինանսիստին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2024 թվականի բյուջեի 8/4/2 գործառական դասակարգման (4819) «Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝օրենքով սահմանված կարգով:

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կազմակերպություն նախագահ Ս. Հայրապետյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ-24 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 73-Ա)*

ԼՍԵՑԻՆ

11.ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐՈՂՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԱՅԻՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻՆ ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԼԵՆԱ ՋԻԼԱՎՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 10-րդ հոդվածի 11-րդ մասով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2017 թվականի նոյեմբերի 06-ի N 119-Նորոշման 1-ին կետով հաստատված կարգի 10-րդ և 11-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի գրողների միության Շիրակի մարզային բաժանմունքի նախագահ՝ Անդրանիկ Կարապետյանի՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարին ուղղված գրությունը (համայնքապետարանում մուտքագրված 2024 թվականի մարտի 22-ին N 5517 թվագրմամբ)՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1. Հայաստանի գրողների միության Շիրակի մարզային բաժանմունքին՝ որպես նվիրատվություն, հատկացնել 400 000 (չորս հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝2024 թվականին նախատեսված բազմաբնույթ գրական միջոցառումները կազմակերպելու և իրականացնելու համար:

2. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ-գլխավոր ֆինանսիստին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2024 թվականի բյուջեի 8/4/2 գործառական դասակարգման (4819) «Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կազմակերպություն նախագահ Անդրանիկ Կարապետյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Նիստը վարողի կողմից հարցն ընթերցելուց հետո ավագանու անդամ Տիգրան Հովհաննիսյանն առաջարկեց հարցը հանել օրակարգից: Առաջարկությունն ընդունվեց, և առանց նախագիծը քննարկելու նիստը վարողը հարցը հանեց օրակարգից:

ԼՍԵՑԻՆ

12. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉ ԱՂԱՍԻ ԴԱՎՈՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԼԵՆԱ ՋԻԼԱՎՅԱՆ)

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի բնակիչ Աղասի Դավոյանի ընտանիքին պատկանող Գյումրի քաղաքի Խրիմյան Հայրիկ փողոցի 10-րդ շենքի 1-ին բնակարանում բռնկված հրդեհի պատճառով այրվել է խոհանոցն ամբողջությամբ գույքի հետ միասին: Հաշվի առնելով վերոգրյալը, ելնելով Աղասի Դավոյանի ընտանիքին դրամական օգնություն հատկացնելու անհրաժեշտությունից, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 10-րդ հոդվածի 11-րդ մասով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2017 թվականի նոյեմբերի 06-ի N 119-Նորոշման 1-ին կետով հաստատված կարգի 7-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով, նկատի ունենալով Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչության պետի պարտականությունները ժամանակավորապես կատարող, փ/ծ գնդապետ Ա.Ափոյանի 2024 թվականի մարտի 15-ին տրված՝ թիվ 476-95/15 տեղեկանքը և հիմք ընդունելով քաղաքացի Աղասի Դավոյանի՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարին ուղղված դիմումը (Գյումրու համայնքապետարանում մուտքագրված 2024 թվականի մարտի 27-ին N 5858 թվագրմամբ)՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի**

համայնքի ավագանին որոշում է.
1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի բնակիչ Աղասի Դավոյանի ընտանիքին որպես դրամական օգնություն հատկացնել 100 000 (հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:
Նձնարարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ-գլխավոր ֆինանսիստին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2024 թվականի բյուջեի 10/7/1 գործառական դասակարգման (4729) «Այլ նպաստներ բյուջեից» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Աղասի Դավոյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ-24 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 74-Ա)*

ԼՍԵՑԻՆ

13. ՖԻԶԻԿԱԿԱՆ ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ 23-ՐԴ ՇԱԽՄԱՏԻ ԱՇԽԱՐՀԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԼԵՆԱ ՋԻԼԱՎՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 10-րդ հոդվածի 11-րդ մասով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2017թվականի նոյեմբերի 06-ի N 119-Նորոշման 1-ին կետով հաստատված կարգի 10-րդ և 11-րդ կետերի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի շախմատի ֆեդերացիաի(այսուհետ՝ֆեդերացիա) նախագահի առաջին տեղակալ՝ Սմբատ Լպուտյանի համայնքի ղեկավարին ուղղված գրությունը (համայնքապետարանում համապատասխանաբար մուտքագրված՝ 2024 թվականի փետրվարի 05-ի և ապրիլի 02-ի NN 2177, 6200 թվագրումներով)՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**
Ֆեդերացիային, որպես նվիրատվություն հատկացնել 3 000 000 (երեք միլիոն) Հայաստանի Հանրապետության դրամ՝ ֆիզիկական հաշմանդամություն ունեցող անձանց 23-րդ շախմատի աշխարհի անհատական առաջնության կազմակերպչական աշխատանքներն իրականացնելու նպատակով:
2.Հանձնարարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ-գլխավոր ֆինանսիստին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2024 թվականի բյուջեի 8/4/2 գործառական դասակարգման (4819) «Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ֆեդերացիաի նախագահի առաջին տեղակալՍմբատ Լպուտյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ-24 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 75-Ա)*

ԼՍԵՑԻՆ

14. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N 283-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԼԵՆԱ ՋԻԼԱՎՅԱՆ)

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, 34-րդ հոդվածի 1-ին, 2-րդ մասերի դրույթներով՝ **Հայաստանի Հանրապետության**

Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.
1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2023 թվականի դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատողների քանակը, հաստիքացուցակները, պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և Գյումրի համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 27-ի N 282-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 283-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.
1) 1-ին կետով հաստատված NN 1-15 հավելվածները շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն NN 1-15 հավելվածների,
2) 2-րդ կետով հաստատված NN 16-34 հավելվածները շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն NN 16-34 հավելվածների
3) 3-րդ կետով հաստատված NN 35-58 հավելվածները շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն NN 35-57 հավելվածների:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում մայիսի 1-ից:

Կողմ-26 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 76-Ա)*
ԼՍԵՑԻՆ

15. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՇԻՐԱԿ ԳԵՐԵԶՄԱՆԱՏԱՆ 1992-1995 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԱՐՑԱԽՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԺԱՄԱՆԱԿ ԶՈՀՎԱԾ ԱԶԱՏԱՄԱՐՏԻԿՆԵՐԻ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՆԹԵՈՆԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ
(Զեկ. ԼԵՆԱ ՋԻԼԱՎՅԱՆ)
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2023 թվականի հունիսի 28-ի թիվ 120-Ա որոշման համաձայն 1992-1995 թվականների Արցախյան պատերազմի ժամանակ զոհված ազատամարտիկների զինվորական պանթեոնում 65,9 քառ մետր տարածում իրականացվել է վերանորոգման աշխատանքներ: Զինվորական պանթեոնում ևս 54,2 քառ մետր տարածք կարիք ունի վերանորոգման: Հաշվի առնելով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 10-րդ հոդվածի 11-րդ մասով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2017 թվականի նոյեմբերի 06-ի N 119-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 4-րդ կետի 2-րդ ենթակետի «ա» և «բ» պարբերություններով և հիմք ընդունելով «Հավերժ հիշատակ» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ ընկերություն) տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Էդվարդ Բաղրամյանի համայնքի ղեկավարին ուղղված 2024 թվականի մարտի 25-ի զեկուցագիրը՝
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.
1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի Շիրակ գերեզմանատան՝ 1992-1995 թվականների Արցախյան պատերազմի ժամանակ զոհված ազատամարտիկների զինվորական պանթեոնի վերանորոգման համար հատկացնել 2795 000 (երկու միլիոն յոթ հարյուր իննսունհինգ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:
2.Հանձնարարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ-գլխավոր ֆինանսիստին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2024 թվականի բյուջեի 8/2/7 գործառական դասակարգման (5112) «Շենքերի և շինությունների շինարարություն» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընկերության տնօրենի ժամանակավոր պաշտոնակար Էդվարդ Բաղրամյանին պատշաճ իրազեկման օրվան հաջորդող օրվանից:

Կողմ-25 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 77-Ա)*

ԼՍԵՑԻՆ

16. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ «ԳՅՈՒՄՐՈՒ ԱՎՏՈԲՈՒՍ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԳՈՒՅՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԼԵՆԱ ՋԻԼԱՎՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետերով՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի «Գյումրու ավտոբուս» փակ բաժնետիրական ընկերությանն անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել գույք՝ համաձայն հավելվածի:

2.Հանձնարարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ օրենքով սահմանված կարգով կատարել սույն որոշման 1-ին կետում նշված ընկերությանն անհատույց օգտագործման իրավունքով տրամադրվող գույքի հաշվապահական ձևակերպումները:

3.Անհատույց օգտագործման իրավունքով տրամադրվող գույքի հետ կապված գործընթացի կազմակերպումը վերապահել սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի ընդունած իրավական ակտով ստեղծվելիք հանձնաժողովին:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-25 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 78-Ա)*

ԼՍԵՑԻՆ

17. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԹՎՈՎ 2 ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՆՎԱՆԱՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 3-Ի N267-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՇՈՂԻԿ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ)

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 8-ի «Նախադպրոցական ուսումնական հաստատության օրինակելի կանոնադրությունը հաստատելու մասին» 515-Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 28-րդ կետերով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ կետերով, 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի «Հուսո առագաստ մանկապարտեզ», «Երազանք մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների տնօրենների դիմումները (Գյումրու համայնքապետարանում գրանցված համապատասխանաբար 5608 և 5624 թվագրմամբ) ուղղված Գյումրի համայնքի ղեկավարին՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի «Հուսո առագաստ մանկապարտեզ», «Երազանք մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունները անվանափոխել համապատասխանաբար «Հուսո առագաստ-մսուր մանկապարտեզ», «Երազանք-մսուր մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների (այսուհետ՝ կազմակերպություն):

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 3-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի նախադպրոցական համայնքային ոչ առևտրային թվով 22 (քսաներկու) կազմակերպությունների կանոնադրությունները նոր խմբագրությամբ հաստատելու մասին» N

267–Ա որոշման (այսուհետ՝ որոշում) 1–ին կետում կատարել հետևյալ փոփոխությունները.
1) «Հուսո առագաստ մանկապարտեզ» բառերը փոխարինել «Հուսո առագաստ–մսուր մանկապարտեզ» բառերով,
2)«Երազանք մանկապարտեզ» բառերը փոխարինել «Երազանք – մսուր մանկապարտեզ» բառերով:
3. Որոշմամբ հաստատված N6, N10 հավելվածները շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն N1, N2 հավելվածների:
4.Հանձնարարել կազմակերպությունների տնօրեններին.
1) ողջամիտ ժամկետում դիմել Հայաստանի Հանրապետության Արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն՝ սույն որոշման 3–րդ կետով հաստատված կանոնադրությունները օրենքով սահմանված կարգով պետական գրանցում կատարելու խնդրանքով:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կազմակերպությունների տնօրեններին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ-26 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 79-Ա)*

ԼՍԵՑԻՆ

18. «ԲԱԼԱՍԱՆՅԱՆՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻՆ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ԱՎՏՈԿԱՅԱՆԱՏԵՂԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՀԵՆՐԻԿ ԳԱՍՊԱՐՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, «Ավտոտրանսպորտային միջոցների կայանատեղերի տեղական վճարի և վարչական վարույթի առանձնահատկությունների մասին» օրենքի 8-րդ, 10-րդ, 13-րդ հոդվածներով, ՀՀ կառավարության 2012 թվականի հոկտեմբերի 10-ի N 1293-Ն որոշման հավելվածի 2-րդ կետի, 3-րդ ենթակետով, 3-րդ կետով և հիմք ընդունելով «Բալասանյանների ընտանիք» բարեգործական հիմնադրամի խորհրդի նախագահ Խաչատուր Բալասանյանի՝ Գյումրի համայնքի ղեկավարին ուղղված գրությունը (համայնքապետարանում մուտքագրված 2023 թվականի մայիսի 17-ին N 9279 թվագրությամբ)՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**
1. Թույլատրել «Բալասանյանների ընտանիք» բարեգործական հիմնադրամին 2024 թվականի ընթացքում սույն որոշման հավելվածում նշված տարածքում և սահմանված պայմաններով կազմակերպել ծառայողական ավտոկայանատեղի շահագործումը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Բալասանյանների ընտանիք» բարեգործական հիմնադրամի խորհրդի նախագահ Խաչատուր Բալասանյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ-17 Դեմ-10 Ձեռնպահ-2

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 80-Ա)*

ԼՍԵՑԻՆ

19. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ, ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԵՐՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՀԵՆՐԻԿ ԳԱՍՊԱՐՅԱՆ)

Ղեկավարելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետով, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքի 7-րդ հոդվածի 8-րդ մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 33-րդ, 34-րդ, և 35-րդ կետերի պահանջները՝ հիմք քաղաքացիներ Արտյոմ Ղազարյանի 02.11.2023թ. N 23708, Արա

Խաչատրյանի 01.12.2022թ. N22766, Խաչատուր Հայրապետյանի 31.03.2022թ. N5612, Հարություն Գալստյանի 25.04.2023թ. N7349, Դավիթ Խաչատրյանի 17.04.2023թ. N6676, Ռիմա Անդրեասյանի 18.07.2023թ. N14922, Խորեն Վարդանյանի 02.03.2023թ. N3526, Նազիկ, Մնացական, Արփինե, Դիանա Իսրաելյանների և Արթուր,Արսեն Անահիտ, Թումասյանների՝ լիազորված անձ Արմեն Խոցանյանի 13.09.2023թ. N19287, Կարուշ Մկրտչյանի 16.02.2022թ. N2716, Նաիրա Ասլանյանի 29.06.2023թ. N13683, Ագնեսա Խաչատրյանի 08.08.2012թ. N3777, Սաթիկ Սերոբյանի 14.07.2022թ N 12064, Հայաստան Պողոսյանի 29.05.2023 N 10371, Սուրիկ Քյուրքչյանի 03.07.2023 N13909 թվագրումներով դիմումները՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի վարչական տարածքում ինքնակամ կառուցված և դրանց նկատմամբ համայնքի սեփականության իրավունքը գրանցված շենք-շինությունները և դրանց պահպանման ու սպասարկման համար զբաղեցրած հողամասերը ուղղակի վաճառքի միջոցով օտարել տվյալ շինությունները կառուցողներին՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-16 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 81-Ա)*

ԼՍԵՑԻՆ

20. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐՆ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԱՃՈՒՐԴԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՀԵՆՐԻԿ ԳԱՍՊԱՐՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ մասերի դրույթներով՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականությունը հանդիսացող, կառուցապատման նպատակով առանձնացված հողամասերն օտարել աճուրդով և սահմանել աճուրդի մեկնարկային գներն ու պայմանները՝ համաձայն հավելվածի:

Կողմ-16 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 82-Ա)*

ԼՍԵՑԻՆ

21. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ Մ.ԽՈՐԵՆԱՑԻ ՓՈՂՈՑ N 36Ա ՀԱՍՑԵԻ ԿԻՍԱԿԱՌՈՒՅՑԸ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԱՃՈՒՐԴԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՀԵՆՐԻԿ ԳԱՍՊԱՐՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1.Աճուրդով օտարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող (հիմք՝ անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման N 2296618 վկայական) Մ.Խորենացի փողոց N36ա հասցեի 200,2 (երկու հարյուր ամբողջ երկու տասնորդական) քառակուսի մետր մակերեսով կիսակառույցը և դրա կառուցապատման ու սպասարկման համար զբաղեցրած բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակությամբ 0.0378 (զրո ամբողջ երեք հարյուր յոթանասունութ տասնհազարերորդական) հեկտար մակերեսով հողամասը:

2.Հիմք ընդունելով «ՊիՎիէմ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության սույն որոշման 1-ին կետում նշված անշարժ գույքի շուկայական արժեքի գնահատման վերաբերյալ 2024 թվականի մարտի 05-ի գնահատման հաշվետվությունը, սահմանել աճուրդի մեկնարկային

գինը՝ 12800000 (տասներկու միլիոն ութ հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-17 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 83-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

22. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՇԱՐԱ ՏԱԼՅԱՆ ՓՈՂՈՑԻ № 5/14 ՀԱՍՑԵԻ 118.46 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԱՑԻՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՀԵՆՐԻԿ ԳԱՍՊԱՐՅԱՆ)

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Շարա Տալյան փողոցի № 5 հասցեի 423.27 (չորս հարյուր քսաներեք ամբողջ քսանյոթ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը և արտադրամասը սեփականության իրավունքով պատկանում է քաղաքացի Տիգրան Համազասպի Հովհաննիսյանին (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 08092023-08-0031 վկայական):

Քաղաքացի Տիգրան Համազասպի Հովհաննիսյանը դիմել է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարին՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N20032024-08-0042 վկայական) Շարա Տալյան փողոցի № 5/14 հասցեի 118.46 (մեկ հարյուր տասնութ ամբողջ քառասունվեց հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության այլ հողեր գործառնական նշանակության հողամասն ուղղակի վաճառքի միջոցով իրեն օտարելու խնդրանքով: Նկատի ունենալով վերոգրյալը, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի N 550-Ն որոշման 1-ին կետի 3-րդ, 4-րդ, 5-րդ և 6-րդ ենթակետերի դրույթների, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, հողային օրենսգրքի 63-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 66-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով և հիմք ընդունելով քաղաքացի Տիգրան Համազասպի Հովհաննիսյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2023 թվականի սեպտեմբերի 11-ին № 19029 թվագրմամբ)՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1.Քաղաքացի Տիգրան Համազասպի Հովհաննիսյանին ուղղակի վաճառքի միջոցով օտարել սեփականության իրավունքով իրեն պատկանող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Շարա Տալյան փողոցի №5 հասցեի 423.27 (չորս հարյուր քսաներեք ամբողջ քսանյոթ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասին հարակից, Շարա Տալյան փողոցի №5/14 հասցեի համայնքի սեփականություն հանդիսացող, կառուցապատումից ազատ, բնակավայրերի նպատակային նշանակության այլ հողեր գործառնական նշանակության 118.46 (մեկ հարյուր տասնութ ամբողջ քառասունվեց հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը՝ ընդլայնման նպատակով:
2.Օտարվող հողամասի ուղղակի վաճառքի գին սահմանել տվյալ հողամասի կադաստրային արժեքով, որը հողամասի օտարման պահին կազմում է 6834 (վեց հազար ութ հարյուր երեսունչորս) Հայաստանի Հանրապետության դրամ՝ 1.0 (մեկ) քառակուսի մետրի դիմաց, ընդամենը՝ 809555 (ութ հարյուր ինը հազար հինգ հարյուր հիսունհինգ) Հայաստանի Հանրապետության դրամ:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Տիգրան Համազասպի Հովհաննիսյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ-17 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 84-Ա)*

ԼՍԵՑԻՆ

23. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ Պ.ՊՈՌՇՅԱՆ ՓՈՂՈՑԻ № 73/13 ՀԱՍՑԵԻ 47.31 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ, Պ.ՊՈՌՇՅԱՆ ՓՈՂՈՑԻ № 73/14 ՀԱՍՑԵԻ 7.86 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ, Պ.ՊՈՌՇՅԱՆ ՓՈՂՈՑԻ № 73/16 ՀԱՍՑԵԻ 96.55 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՆԵՐՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ (ԶԵԿ. ՀԵՆՐԻԿ ԳԱՍՊԱՐՅԱՆ)

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Պ.Պռոշյան փողոցի 73/12 հասցեի 248.57 (երկու հարյուր քառասունութ ամբողջ հիսունյոթ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը սեփականության իրավունքով պատկանում է քաղաքացիներ Գրիգոր Ստյոպայի Մկրտչյանին և Քնարիկ Ռուբիկի Փահլևանյանին (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 11082021-08-0038 վկայական):

Քաղաքացիներ Գրիգոր Ստյոպայի Մկրտչյանը և Քնարիկ Ռուբիկի Փահլևանյանը դիմել են Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարին՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքին սեփականության իրավունքով պատկանող Պ. Պռոշյան փողոցի № 73/13 հասցեի (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 03042024-08-0037 վկայական) 47.31 (քառասունյոթ ամբողջ երեսունմեկ հարյուրերորդական) քառակուսի մետր, Պ.Պռոշյան փողոցի № 73/14 հասցեի (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N02042024-08-0016 վկայական) 7.86 (յոթ ամբողջ ութսունվեց հարյուրերորդական) քառակուսի մետր և Պ.Պռոշյան փողոցի № 73/16 հասցեի (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 28032024-08-0028 վկայական) 96.55 (իննսունվեց ամբողջ հիսունհինգ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսներով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասերն ուղղակի վաճառքի միջոցով իրենց օտարելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի N 550-Ն որոշման 1-ին կետի 3-րդ, 4-րդ, 5-րդ և 6-րդ ենթակետերի դրույթների, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, հողային օրենսգրքի 63-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 66-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով և հիմք ընդունելով քաղաքացի Գրիգոր Ստյոպայի Մկրտչյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2024 թվականի ապրիլի 01-ին 6044 թվագրմամբ)՝**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1.Քաղաքացիներ Գրիգոր Ստյոպայի Մկրտչյանին և Քնարիկ Ռուբիկի Փահլևանյանին ուղղակի վաճառքի միջոցով օտարել սեփականության իրավունքով իրենց պատկանող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Պ.Պռոշյան փողոցի №73/12 հասցեի 248.57 (երկու հարյուր քառասունութ ամբողջ հիսունյոթ հարյուրերոր դական) քառակուսի մետր մակերեսով հողամասին հարակից, Պ.Պռոշյան փողոցի №73/13 հասցեի 47.31 (քառասունյոթ ամբողջ երեսունմեկ հարյուրերորդական) քառակուսի մետր, Պ.Պռոշյան փողոցի № 73/14 հասցեի 7.86 (յոթ ամբողջ ութսունվեց հարյուրերորդական) քառակուսի մետր և Պ.Պռոշյան փողոցի № 73/16 հասցեի 96.55 (իննսունվեց ամբողջ հիսունհինգ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսներով համայնքի սեփականություն հանդիսացող, կառուցապատումից ազատ, բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասերը՝ ընդլայնման նպատակով:

2.Օտարվող հողամասերի ուղղակի վաճառքի գին սահմանել տվյալ հողամասի կադաստրային արժեքով, որը հողամասի օտարման պահին կազմում է 10514 (տասը հազար հինգ հարյուր տասնչորս) Հայաստանի Հանրապետության դրամ՝ 1.0 (մեկ) քառակուսի մետրի դիմաց, ընդամենը՝ համապատասխանաբար 497417 (չորս հարյուր իննսունյոթ հազար չորս հարյուր տասնյոթ), 82640 (ութսուներկու հազար վեց հարյուր քառասուն) և 1015126 (մեկ միլիոն

տասնհինգ հազար մեկ հարյուր քսանվեց) Հայաստանի Հանրապետության դրամ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Գրիգոր Ստյոպայի Մկրտչյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ-17 Դեմ-2 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 85-Ա)*

ԼՍԵՑԻՆ

24. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ Պ.ՊՌՈՇՅԱՆ ՓՈՂՈՑԻ № 73/15 ՀԱՍՑԵԻ 142.48 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԱՑԻՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՀԵՆՐԻԿ ԳԱՍՊԱՐՅԱՆ)

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Գ.Նժդեհի փողոցի №16/10 հասցեի 300.84 (երեք հարյուր ամբողջ ութսունչորս հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը և բնակելի տունը սեփականության իրավունքով պատկանում է քաղաքացիներ Մանվել Զավենի Ուստյանին և Անահիտ Հենրիկի Ուստյանին (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 31012014-08-0001 վկայական):

Քաղաքացիներ Մանվել Զավենի Ուստյանը և Անահիտ Հենրիկի Ուստյանը դիմել են Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարին՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 28032024-08-0029 վկայական) Պ.Պռոշյան փողոցի № 73/15 հասցեի 142.48 (մեկ հարյուր քառասուներկու ամբողջ քառասունութ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասն ուղղակի վաճառքի միջոցով իրենց օտարելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի N 550-Ն որոշման 1-ին կետի 3-րդ, 4-րդ, 5-րդ և 6-րդ ենթակետերի դրույթների, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, հողային օրենսգրքի 63-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 66-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով և հիմք ընդունելով քաղաքացի Անահիտ Հենրիկի Ուստյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2024 թվականի մարտի 29-ին 5967 թվագրմամբ)՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

աքացիներ Մանվել Զավենի Ուստյանին և Անահիտ Հենրիկի Ուստյանին ուղղակի վաճառքի միջոցով օտարել սեփականության իրավունքով իրենց պատկանող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Գ. Նժդեհի փողոցի № 16/10 հասցեի 300.84 (երեք հարյուր ամբողջ ութսունչորս հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասին հարակից, Պ. Պռոշյան փողոցի №73/15 հասցեի համայնքի սեփականություն հանդիսացող, կառուցապատումից ազատ, բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 142.48 (մեկ հարյուր քառասուներկու ամբողջ քառասունութ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը՝ որպես բակ:

2.Օտարվող հողամասի ուղղակի վաճառքի գին սահմանել տվյալ հողամասի կադաստրային արժեքով, որը հողամասի օտարման պահին կազմում է 10514 (տասը հազար հինգ հարյուր տասնչորս) Հայաստանի Հանրապետության դրամ՝ 1.0 (մեկ) քառակուսի մետրի դիմաց, ընդամենը՝ 1498034 (մեկ միլիոն չորս հարյուր իննսունութ հազար երեսունչորս) Հայաստանի Հանրապետության դրամ:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Անահիտ Հենրիկի Ուստյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ-17 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 86-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

25. ՔԱՂԱՔԱՑԻ ՎԱԶԳԵՆ ՆԻԿՈԼԱՅԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՄԱՅԱԿՈՎՍԿՈՒ ՓՈՂՈՑԻ N 57/2 ՀԱՍՑԵԻ ՏԱՂԱՎԱՐԻ ԶԲԱՂԵՑՐԱԾ 30.0 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՀԵՆՐԻԿ ԳԱՍՊԱՐՅԱՆ)

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Մայակովսկու փողոցի N57/2 հասցեի տաղավարը կառուցապատման իրավունքով պատկանում է քաղաքացի Վազգեն Նիկոլայի Հարությունյանին: Քաղաքացի Վազգեն Նիկոլայի Հարությունյանը դիմել է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարին՝ կառուցապատման իրավունքով իրեն պատկանող Գյումրի քաղաքի Մայակովսկու փողոցի N57/2 հասցեի տաղավարի պահպանման ու սպասարկման համար զբաղեցրած 30.0 (երեսուն) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասն ուղղակի վաճառքի միջոցով իրեն օտարելու խնդրանքով:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի 2024 թվականի մարտի 24-ի թիվ ՎԴ5/0050/05/19 վճիռը և քաղաքացի Վազգեն Նիկոլայի Հարությունյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2023 թվականի մայիսի 05-ին N 8339 թվագրմամբ)՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1.Քաղաքացի Վազգեն Նիկոլայի Հարությունյանին ուղղակի վաճառքի միջոցով օտարել կառուցապատման իրավունքով իրեն պատկանող Գյումրի քաղաքի Մայակովսկու փողոցի N 57/2 հասցեի տաղավարի պահպանման ու սպասարկման համար զբաղեցրած 30.0 (երեսուն) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասը:

2.Օտարվող հողամասի ուղղակի վաճառքի գին սահմանել տվյալ հողամասի կադաստրային արժեքով, որը հողամասի օտարման պահին կազմում է 24889 (քսանչորս հազար ութ հարյուր ութսունինը) Հայաստանի Հանրապետության դրամ՝ 1.0 (մեկ) քառակուսի մետրի դիմաց, ընդամենը՝ 746670 (յոթ հարյուր քառասունվեց հազար վեց հարյուր յոթանասուն) Հայաստանի Հանրապետության դրամ:

Կողմ-0 Դեմ-0 Ձեռնպահ-17

Վ.Սամսոնյան
Գ.Մելիքյան
Լ.Սանոյան
Տ.Հովհաննիսյան
Ա.Հովհաննիսյան
Ն.Պողոսյան
Գ.Պասկևիչյան
Ս.Հովհաննիսյան
Հ.Ասատրյան
Ս.Խուբեսարյան
Գ.Մանուկյան
Կ.Սոսյան
Ս.Ադամյան
Ն.Միրզոյան
Հ.Մարգարյան
Կ.Մալխասյան
Վ.Հակոբյան

Որոշումը չի ընդունվել:

ԼՍԵՑԻՆ

26. ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ԷԴԻԿ ՊԵՏՅԱՅԻ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ (1/5 ՄԱՍ), ԳՈՀԱՐԻԿ ՄԵՐԳԵԼԻ ՄԽԻԹԱՐՅԱՆԻՆ (2/5 ՄԱՍ), ԳՈՌ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ ԿԻՐԱԿՈՍՅԱՆԻՆ (1/5 ՄԱՍ), ԱՐԱՔՍԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ ԿԻՐԱԿՈՍՅԱՆԻՆ (1/5 ՄԱՍ) ՊԱՏԿԱՆՈՂ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԿԱԶԱՉԻ ՊՈՍՏ 11 ԴՈՍ N13Ա ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԶԲԱՂԵՑՐԱԾ 86.0 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
(Զեկ. ՀԵՆՐԻԿ ԳԱՍՊԱՐՅԱՆ)

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Կազաչի պոստ 11 դոս N13ա հասցեի տունը պատկանում է քաղաքացիներ Էդիկ Պետյայի Վարդանյանին (1/5 մաս), Գոհարիկ Մերգելի Մխիթարյանին (2/5 մաս), Գոռ Հարությունի Կիրակոսյանին (1/5 մաս), Արաքսի Հարությունի Կիրակոսյանին (1/5 մաս): Քաղաքացի Էդիկ Վարդանյանի լիազորված անձ Արտյոմ Բարսեղյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին՝ նշված տան փաստացի զբաղեցրած 86.0(ութսունվեց) քառակուսի մետր մակերեսով հողամասը ուղղակի վաճառքի միջոցով օտարելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոհիշյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 62-րդ հոդվածի 3-րդ մասով, 63-րդ հոդվածի 2-րդ կետով, հաշվի առնելով որ հողամասը չի գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, հիմք ընդունելով քաղաքացի Էդիկ Վարդանյանի լիազորված անձ Արտյոմ Բարսեղյանի դիմումը՝ (մուտքագրված համայնքապետարանում 2024 թվականին N1614 թվագրմամբ)՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է. Քաղաքացիներ Էդիկ Պետյայի Վարդանյանին (1/5 մաս), Գոհարիկ Մերգելի Մխիթարյանին (2/5 մաս), Գոռ Հարությունի Կիրակոսյանին (1/5 մաս), Արաքսի Հարությունի Կիրակոսյանին (1/5 մաս) ուղղակի վաճառքի միջոցով օտարել իրենց պատկանող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Կազաչի պոստ 11 դոս N13ա հասցեի տան պահպանման և սպասարկման համար փաստացի զբաղեցրած 86.0(ութսունվեց) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասը:

1. Հողամասի ուղղակի վաճառքի գին սահմանել տվյալ հողամասի կադաստրային գնի չափով որը կազմում է 2888 (երկու հազար ութ հարյուր ութսունութ) Հայաստանի Հանրապետության դրամ 1.0 (մեկ) քառակուսի մետրի դիմաց, ընդամենը՝ 248368(երկու հարյուր քառասունութ հազար երեք հարյուր վաթսունութ) Հայաստանի Հանրապետության դրամ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում լիազորված անձ Արտյոմ Բարսեղյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ-16 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 87-Ա)*

ԼՍԵՑԻՆ

27. ՔԱՂԱՔԱՑԻ ԳՈՒՐԳԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԱԽՈՒՐՅԱՆԻ ԽՃՈՒՂԻ N2/1 ՀԱՍՑԵԻ ԱՎՏՈՏՆԱԿԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՓԱՍՏԱՑԻ ԱՌԿԱ 30.79 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՄԱՅՆՔԱՊԱՏԿԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
(Զեկ. ՀԵՆՐԻԿ ԳԱՍՊԱՐՅԱՆ)

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Ախուրյանի խճուղի N2/1 հասցեի ավտոտնակը սեփականության իրավունքով պատկանում է քաղաքացի Գուրգեն Խաչատրյանին, որի զբաղեցրած հողամասը տրամադրված է եղել վարձակալությամբ (հիմք՝ անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական N1137931):

Քաղաքացի Գուրգեն Խաչատրյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին՝ նշված

ավտոտնակի պահպանման և սպասարկման համար փաստացի առկա 30.79(երեսուն ամբողջ յոթանասունինը հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը ուղղակի վաճառքի միջոցով օտարելու խնդրանքով: Նկատի ունենալով վերոհիշյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 62-րդ հոդվածի 3-րդ մասով, 63-րդ հոդվածի 2-րդ կետով, հաշվի առնելով որ հողամասը չի գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, հիմք ընդունելով քաղաքացի Գուրգեն Խաչատրյանի դիմումը՝(մուտքագրված համայնքապետարանում 2023 թվականին N1369 թվագրմամբ)՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1.Քաղաքացի Գուրգեն Խաչատրյանին ուղղակի վաճառքի միջոցով օտարել սեփականություն իրավունքով իրեն պատկանող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Ախուրյանի խճուղի N2/1 հասցեի ավտոտնակի պահպանման և սպասարկման համար փաստացի առկա 30.79(երեսուն ամբողջ յոթանասունինը հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասը:

2.Հողամասի ուղղակի վաճառքի գին սահմանել տվյալ հողամասի կադաստրային գնի չափով որը կազմում է 6834 (վեց հազար ութ հարյուր երեսունչորս) Հայաստանի Հանրապետության դրամ 1.0 (մեկ) քառակուսի մետրի դիմաց, ընդամենը՝ 210419(երկու հարյուր տասը հազար չորս հարյուր տասնինը) Հայաստանի Հանրապետության դրամ:

3.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում քաղաքացի Գուրգեն Խաչատրյանին պատշաճ կարգով իրազեկման օրվան հաջորդող օրվանից:

Կողմ-19 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 88-Ա)*

ԼՍԵՑԻՆ

28.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ Վ.ՍԱՐԳՍՅԱՆ ՓՈՂՈՑ N 1/9 ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍԸ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՉԱՓ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՀԵՆՐԻԿ ԳԱՍՊԱՐՅԱՆ)

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Վ.Սարգսյան փողոց 1-ին շենք N 2 հասցեի բնակարանը սեփականության իրավունքով պատկանում է քաղաքացի Անահիտ Ալբերտի Քոչարյանին (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական 07022024-08-0014): Քաղաքացի Անահիտ Քոչարյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին աստիճաններ կառուցելու համար հողամաս տրամադրելու խնդրանքով:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հողային օրենսգրքի 76-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշման 46.2-րդ կետի «բ» կետով, հիմք ընդունելով Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և ճարտարապետության բաժնի կողմից ներկայացված հողամասի ելակետային տվյալները և քաղաքացի Անահիտ Քոչարյանի՝ համայնքի ղեկավարին ուղղված դիմումը (համայնքապետարանում մուտքագրված 2024 թվականի փետրվարի 12-ին N2740 թվագրմամբ)՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N29032024-08-0039 վկայական) Վ.Սարգսյան փողոց N 1/9 հասցեի 0,000852 (զրո ամբողջ ութ հարյուր հիսուներկու միլիոներորդական) հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, ընդհանուր օգտագործման գործառնական նշանակությամբ հողամասը կառուցապատման իրավունքով տրամադրել քաղաքացի Անահիտ Ալբերտի Քոչարյանին 20 (քսան) տարի ժամկետով, տարեկան 25560 (քսանհինգ հազար հինգ հարյուր վաթսուն) Հայաստանի Հանրապետության դրամ վարձավճարով, աստիճաններ կառուցելու նպատակով:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Անահիտ Քոչարյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ-19 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 89-Ա)*

ԼՍԵՑԻՆ

29. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԿԱՐՍԻ ԽՃՈՒՂԻ N 2/1 ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍԸ ՄՐՑՈՒՅԹՈՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ՉԱՓ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՀԵՆՐԻԿ ԳԱՍՊԱՐՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հողային օրենսգրքի 74-րդ հոդվածի, 76-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի դրույթներով, հիմք ընդունելով Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի կողմից ներկայացված հողամասի ելակետային տվյալները՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի Մարզի Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական 01042024-08-0042) Կարսի խճուղի N 2/1 հասցեի 0,109689 (զրո ամբողջ մեկ հարյուր ինը հազար վեց հարյուր ութսունինը միլիոներորդական) հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, ընդհանուր օգտագործման գործառնական նշանակությամբ հողամասը (կադաստրային ծածկագիր 08-001-0247-0011) մրցույթով կառուցապատման իրավունքով, 30 (երեսուն) տարի ժամկետով, տրամադրել սպասարկման օբյեկտ կառուցելու նպատակով:

2.Սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի մրցույթի վարձավճարի մեկնարկային չափ սահմանել՝ տարեկան 230000 (երկու հարյուր երեսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-17 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է:*(կցվում է որոշում N 90-Ա)*

ԼՍԵՑԻՆ

30. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԿԱՄՈՅԻ ՓՈՂՈՑԻ № 75/7 ՀԱՍՑԵԻ 41.0 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՔԱՂԱՔԱՑԻ ԱՆԴՐԱՆԻԿ ԳԱԲՐԻԵԼԻ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԿԱՄՈՅԻ ՓՈՂՈՑԻ № 75/6 ՀԱՍՑԵԻ 41.0 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԵՏ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՀԵՆՐԻԿ ԳԱՍՊԱՐՅԱՆ)

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Կամոյի փողոցի № 75/6 հասցեի 41.0 (քառասունմեկ) քառակուսի մետր մակերեսով հողամասը սեփականության իրավունքով պատկանում է քաղաքացի Անդրանիկ Գաբրիելի Պետրոսյանին (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 22112023-08-0035 վկայական): Քաղաքացի Անդրանիկ Գաբրիելի Պետրոսյանը դիմել է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարին՝ վերը նշված հողամասը Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N04032024-08-0030 վկայական) Գյումրի քաղաքի Կամոյի փողոցի N 75/7 հասցեի 41.0 (քառասունմեկ) քառակուսի մետր մակերեսով հողամասի հետ փոխանակելու խնդրանքով:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-

րդ կետով, Հողային օրենսգրքի 71-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 3-րդ մասով, հիմք ընդունելով քաղաքացի Անդրանիկ Գաբրիելի Պետրոսյանի դիմումը (համայնքապետարանում մուտքագրված 2023 թվականի նոյեմբերի 07-ին N 24033 թվագրմամբ)՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1.Տալ համաձայնություն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքին սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Կամոյի փողոցի N75/7 հասցեի 41.0 (քառասունմեկ ամբողջ) քառակուսի մետր մակերեսով հողամասը քաղաքացի Անդրանիկ Գաբրիելի Պետրոսյանին սեփականության իրավունքով պատկանող՝ Գյումրի քաղաքի Կամոյի փողոցի N 75/6 հասցեի 41.0 (քառասունմեկ ամբողջ) քառակուսի մետր մակերեսով հողամասի հետ փոխանակության միջոցով օտարելուն:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Անդրանիկ Գաբրիելի Պետրոսյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ-19 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է: *(կցվում է որոշում N 91-Ա)*

ԼՍԵՑԻՆ

31. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԿԱՄՈՅԻ ՓՈՂՈՑԻ № 75/2 ՀԱՍՑԵԻ 50.0 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՔԱՂԱՔԱՑԻ ՎԵՐՈՆԻԿԱ ԳԱՌՆԻԿԻ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԿԱՄՈՅԻ ՓՈՂՈՑԻ № 75/5 ՀԱՍՑԵԻ 50.0 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԵՏ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՀԵՆՐԻԿ ԳԱՍՊԱՐՅԱՆ)

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Կամոյի փողոցի № 75/5 հասցեի 50.0 (հիսուն ամբողջ) քառակուսի մետր մակերեսով հողամասը սեփականության իրավունքով պատկանում է քաղաքացի Վերոնիկա Գառնիկի Մկրտչյանին (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 07112023-08-0055 վկայական):

Քաղաքացի Վերոնիկա Գառնիկի Մկրտչյանը դիմել է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարին՝ վերը նշված հողամասը Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 06022024-08-0007 վկայական) Գյումրի քաղաքի Կամոյի փողոցի N 75/2 հասցեի 50.0 (հիսուն ամբողջ) քառակուսի մետր մակերեսով հողամասի հետ փոխանակելու խնդրանքով:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հողային օրենսգրքի 71-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 3-րդ մասով, հիմք ընդունելով քաղաքացի Վերոնիկա Գառնիկի Մկրտչյանի դիմումը (համայնքապետարանում մուտքագրված 2023 թվականի օգոստոսի 02-ին N 16104 թվագրմամբ)՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1.Տալ համաձայնություն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքին սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Կամոյի փողոցի N75/2 հասցեի 50.0 (հիսուն ամբողջ) քառակուսի մետր մակերեսով հողամասը քաղաքացի Վերոնիկա Գառնիկի Մկրտչյանին սեփականության իրավունքով պատկանող՝ Գյումրի քաղաքի Կամոյի փողոցի N75/5 հասցեի 50.0 (հիսուն ամբողջ) քառակուսի մետր մակերեսով հողամասի հետ փոխանակության միջոցով օտարելուն:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Վերոնիկա Գառնիկի Մկրտչյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ-19 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է:*(կցվում է որոշում N 92-Ա)*

ԼՍԵՑԻՆ

32. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 13-Ի № 19-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՀԵՆՐԻԿ ԳԱՍՊԱՐՅԱՆ)

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2024 թվականի փետրվարի 13-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականությունը հանդիսացող, ինքնակամ կառուցված շինությունները և դրանց պահպանման ու սպասարկման համար զբաղեցրած հողամասերն ուղղակի վաճառքի միջոցով օտարելու մասին» N 19-Ա որոշմամբ հաստատված հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) 11-րդ կետի 9-րդ սյունակի «բնակելի տուն» բառերը փոխարինել «ավտոտնակ» բառով,

2) 15-րդ կետի

ա.8-րդ սյունակի «1493466» թիվը փոխարինել «497822» թվով,

բ.9-րդ սյունակի «բնակելի տուն» բառերը փոխարինել «ավտոտնակ» բառով:

2.Սույն որոշումն ուժի մեջ էմտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-19 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է: *(կցվում է որոշում N 93-Ա)*

ԼՍԵՑԻՆ

33. «ԳԱԶՈՆԵ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՐԵՎԱՆՅԱՆ ԽՃՈՒՂԻ N 189 ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ՀԵՂՈՒԿ ԳԱԶԻ ԱՎՏՈԳԱԶԱԼՑԱԿԱՆԻ ԿԱՌՈՒՑՄԱՆԸ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՀԵՆՐԻԿ ԳԱՍՊԱՐՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի N 1325-Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի 28-րդ կետով, հիմք ընդունելով «Գազոնե» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ ընկերություն) նախաձեռնությամբ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում 2024 թվականի փետրվարի 29-ին կայացած Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի Երևանյան խճուղի N189 հասցեի հողամասում հեղուկ գազի ավտոգազալցակայանի կառուցման վերաբերյալ հանրային բաց լսման և քննարկման արձանագրությունը և հիմք ընդունելով ընկերության տնօրեն՝ Կարեն Հակոբյանի (այսուհետ՝ տնօրեն) 2024 թվականի հունվարի 12-ին ներկայացրած դիմումը (համայնքապետարանում մուտքագրված 2024 թվականի հունվարի 12-ին N 603 թվագրմամբ)՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1.Տալ նախնական համաձայնություն ընկերությանը Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի Երևանյան խճուղի N 189 հասցեի հողամասում հեղուկ գազի ավտոգազալցակայանի կառուցմանը:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընկերության տնօրենին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ-19 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է: *(կցվում է որոշում N 94-Ա)*

ԼՍԵՑԻՆ

34. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 05-Ի N 51-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՀԵՆՐԻԿ ԳԱՍՊԱՐՅԱՆ)

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2023 թվականի հունիսի 28-ի N 132-Ա, նոյեմբերի 14-ի N 239-Ա որոշումները և հաշվի առնելով «Կարիտաս-Արեգակ» բարեգործական հիմնադրամի լիազորված անձ Վահան Դավթյանի դիմումը՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2017 թվականի մայիսի 05-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականությունը հանդիսացող Ֆորալբերգի N 10 հասցեի հողամասը «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպությանը անհատույց օգտագործման տրամադրելու մասին» N 51-Ա որոշման 1-ին կետում «բնակավայրերի» բառը փոխարինել «բնակավայրերի, արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության» բառերով, իսկ «հասարակական կառուցապատման» բառերը փոխարինել «այլ հողեր, Գյուղատնտեսական արտադրական օբյեկտների» բառերով:

2.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում լիազորված անձ Վահան Դավթյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ-19 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է: *(կցվում է որոշում N 95-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

35. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 15-Ի № 55-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՀԵՆՐԻԿ ԳԱՍՊԱՐՅԱՆ)

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2024 թվականի մարտի 15-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի Մարզի Գյումրի Քաղաքի Գարեգին Նժդեհի փողոցի №17/20, Գարեգին Նժդեհի փողոցի № 17/21 և Գարեգին Նժդեհի քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասը ուղղակի վաճառքի միջոցով օտարելու մասին» № 55-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

1) վերնագրում, նախաբանում և 1-ին կետում «զբաղեցրած 129.69 (մեկ հարյուր քսանինն ամբողջ վաթսունինը հարյուրերորդական)» բառերը և թվերը փոխարինել «համապատասխանաբար զբաղեցրած 82.61 (ութսուներկու ամբողջ վաթսունմեկ հարյուրերորդական) քառակուսի մետր, 43.48 (քառասուներեք ամբողջ քառասունութ հարյուրերորդական) քառակուսի մետր և 3.6 (երեք ամբողջ վեց տասնորդական)» բառերով և թվերով,

2)վերնագրում, նախաբանում և 1-ին կետում «հողամասը» բառը փոխարինել «հողամասերը» բառով,

3)2-րդ կետում «1363560 (մեկ միլիոն երեք հարյուր վաթսուներեք հազար հինգ հարյուր վաթսուն)» բառերը և թվերը փոխարինել «համապատասխանաբար 868561 (ութ հարյուր վաթսունութ հազար հինգ հարյուր վաթսունմեկ), 457148 (չորս հարյուր հիսունյոթ հազար մեկ հարյուր քառասունութ) և 37850 (եռեսունյոթ հազար ութ հարյուր հիսուն)» թվերով և բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-19 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է: *(կցվում է որոշում N 96-Ա)*

ԼՍԵՑԻՆ

36. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՌՈՒՍԹԱՎԵԼԻ ՓՈՂՈՑ N 5 ՀԱՍՑԵԻ ՊՈՒՐԱԿԻ ԱՆՎԱՆԱԿՈՉՄԱՆ ՄԱՍԻՆ
(Զեկ. ՀԵՆՐԻԿ ԳԱՍՊԱՐՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ և 8-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2016 թվականի նոյեմբերի 10-ի N 171-Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի 12-րդ կետի 33-րդ ենթակետով, հաշվի առնելով «Տ-ՄԵԴ» փակ բաժնետիրական ընկերության գլխավոր տնօրեն Գ.Թառլամազյանի՝ Գյումրի համայնքի ղեկավարին ուղղված 2024 թվականի ապրիլի 03–ի N 6247 գրությունը՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**
1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Ռուսթավելի փողոց N5 հասցեի պուրակը անվանակոչել՝ Վլադիլեն Բալյանի անվան պուրակ:
2.Հանձնարարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և ճարտարապետության բաժնի պետի ծառայողական պարտականությունները կատարողին՝
1) իրականացնել անհրաժեշտ գործողություններ՝ կապված պուրակի անվանակոչման հետ, այդ թվում նաև անվանատախտակի նախագծման, պատրաստման և տեղադրման աշխատանքները,
2) սույն որոշումն օրինական ուժի մեջ մտնելուց հետո օրենքով սահմանված կարգով ներկայացնել աշխարհագրական անվանումների ռեգիստր վարող պետական լիազոր մարմնին՝ անվանակոչման պետական գրանցում իրականացնելու համար:
3.Հանձնարարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ-գլխավոր ֆինանսիստին՝ ապահովել անվանատախտակի նախագծման, պատրաստման և տեղադրման համար անհրաժեշտ վճարումը՝ համաձայն ներկայացվող ակտերի:
4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդ օրվանից:

Կողմ-19 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է: *(կցվում է որոշում N 97-Ա)*
ԼՍԵՑԻՆ

37. ՄՈՎՍԵՍ ՄԻՔԱՅԵԼԻ ՊՈՂՈՍՅԱՆԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ
(Զեկ. ՀԵՆՐԻԿ ԳԱՍՊԱՐՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության մշակույթի և սպորտի նախարարության «Գյումրու պետական բժշկական քոլեջ» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ կազմակերպություն) տնօրեն Մ.Մարտիրոսյանի՝ Գյումրի համայնքի ղեկավարին ուղղված գրությունը (համայնքապետարանում մուտքագրված 2024 թվականի փետրվարի 27-ի N3919 թվագրմամբ)՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**
1.Տալ համաձայնություն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Շիրազի փողոցի N 3 հասցեի շենքի ճակատային մասում կազմակերպության հիմնադիր՝ առաջին տնօրեն, Մովսես Միքայելի Պողոսյանին նվիրված հուշատախտակի տեղադրմանը:
2.Հուշատախտակի տեղադրման ծախսերը կատարվելու են Մովսես Պողոսյանի որդու՝ Միքայել

Պողոսյանի միջոցներով: 3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կազմակերպության տնօրեն Մ.Մարտիրոսյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ-20 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 98-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

38. «ՏԻԳՐԱՆ ԱԲԳԱՐՅԱՆ ՄԱՐՏԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ ԱԿՈՒՄԲ» ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ, ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ (ՄՇՏԱԿԱՆ) ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՂԱՐՍԻ ԽՃՈՒՂԻ N 20 ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐ ԱՄՍԻՑ ՄԻՆՉԵՎ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐ ԱՄԻՍԸ ՆԵՐԱՌՅԱԼ ԸՆԿԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՐԿԻ ՄԱՅՐ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ԵՎ ՏՈՒՅԺԵՐԻ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ
(Զեկ. ՇՈՒՌԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ)

Գյումրի համայնքի ղեկավարին է դիմել «Տիգրան Աբգարյան մարտական պատրաստության ակումբ» հայրենասիրական, բարեգործական հասարակական կազմակերպության (այսուհետ՝ կազմակերպություն) նախագահ Ժորա Աբգարյանը՝ կազմակերպությանը (հարկ վճարողի հաշվառման համարը՝ 05547574, գրանցման հասցեն՝ քաղաք Գյումրի, Սարգսյան փողոց 2-րդ նրբանցք տուն 17) անհատույց (մշտական) օգտագործման իրավունքով տրամադրված (հիմք՝ Գյումրի համայնքի ավագանու 2021 թվականի հունիսի 15-ի N 141-Ա որոշում) Գյումրի քաղաքի Ղարսի խճուղի N 20 հասցեի 1 (մեկ) հեկտար մակերեսով հողամասի 2023 թվականի հունվար ամսից մինչև 2024 թվականի դեկտեմբեր ամիսը ներառյալ ընկած ժանակաշրջանի անշարժ գույքի հարկի մայր գումարների և տույժերի վճարումների նկատմամբ արտոնություն սահմանելու խնդրանքով, հաշվի առնելով այն հանգամանքը, որ կազմակերպությունն իր աշխատանքային գործունեության ընթացքում չունի ֆինանսական հատկացումներ:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, Հարկային օրենսգրքի 230-րդ հոդվածի 3-րդ մասի, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2012 թվականի հունիսի 22-ի N822-ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ կետի 2-րդ ենթակետի, 8-րդ, 9-րդ կետերի դրույթներով և հիմք ընդունելով կազմակերպության նախագահ Ժորա Աբգարյանի 2024 թվականի մարտի 14-ի N 014 դիմումը՝ (համայնքապետարանում մուտքագրված 2024 թվականի մարտի 14-ին N4946թվագրմամբ)՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1.Սահմանել արտոնություն կազմակերպությանը անհատույց (մշտական) օգտագործման իրավունքով տրամադրված Գյումրի քաղաքի Ղարսի խճուղի N 20 հասցեի 1 (մեկ) հեկտար մակերեսով հողամասի 2024 թվականի ապրիլի 12-ի դրությամբ 2023 թվականի հունվար ամսից մինչև 2024 թվականի դեկտեմբեր ամիսը ներառյալ ընկած ժամանակաշրջանի անշարժ գույքի հարկի մայր գումարների և տույժերի վճարումների նկատմամբ, ազատելով ընդամենը անշարժ գույքի հարկի 165.533 (մեկ հարյուր վաթսունհինգ հազար հինգ հարյուր երեսուներեք) Հայաստանի Հանրապետության դրամ գումարի վճարումից, որից մայր գումարը կազմում է 159.605(մեկ հարյուր հիսունինը հազար վեց հարյուր հինգ) Հայաստանի Հանրապետության դրամ, իսկ տույժը կազմում է 5.928 (հինգ հազար ինը հարյուր քսանութ) Հայաստանի Հանրապետության դրամ:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կազմակերպության նախագահին պատշաճ իրազեկման օրվան հաջորդող օրվանից:

Կողմ-20 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է: *(կցվում է որոշում N 99-Ա)*

ԼՍԵՑԻՆ

39. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԼԻՍԻՆՅԱՆ ՓՈՂՈՑ N 15 ՀԱՍՑԵԻ ԿԻՍԱԿԱՌՈՒՅՑ ՇԵՆՔԸ «ԴԵՊԻ ԱՌԱՋ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ /ՄՇՏԱԿԱՆ/ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՀԵՆՐԻԿ ԳԱՍՊԱՐՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Գյումրի համայնքի ավագանու 2024 թվականի փետրվարի 13-ի N 29-Ա որոշումը, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի և «Դեպի առաջ» բարեգործական հասարակական կազմակերպության միջև կնքված համագործակցության մասին հուշագիրը և Հայաստանի Հանրապետության պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահի տեղակալի գրությունը (մուտքագրված համայնքապետարանում 2024 թվականի փետրվարի 02-ին N 2070 թվագրմամբ)՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 11042024-08-0013) Լիսինյան փողոց N 15 հասցեի 1653,8 (մեկ հազար վեց հարյուր հիսուներեք ամբողջ ութ տասնորդական) քառակուսի մետր մակերեսով կիսակառույց շենքը, և դրա պահպանման ու սպասարկման համար զբաղեցված բնակավայրերի նպատակային նշանակության հողերի բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0,10682 (զրո ամբողջ տասը հազար վեց հարյուր ութսուներկու հարյուրհազարերորդական) հեկտար մակերեսով հողամասը անհատույց /մշտական/ օգտագործման տրամադրել «Դեպի առաջ» բարեգործական հասարակական կազմակերպությանը, շենքը լրակառուցելու, ուժեղացնելու և սոցիալական բնակարանների վերածելու նպատակով:

2. Շենքը լրակառուցելուց և ուժեղացնելուց հետո սոցիալական բնակարանները հանձնել համայնքին, որպես սեփականություն, իսկ առաջին հարկը թողնել կազմակերպությանը սոցիալ-կրթական և արտադրական նպատակներով օգտագործելու համար:

3. Շենքի կառուցման և հետագա շահագործման պայմաններն ու պահանջները մանրամասնել Գյումրի համայնքի ղեկավարի որոշմամբ:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «ԴԵՊԻ ԱՌԱՋ» բարեգործական հասարակական կազմակերպությանը պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ-20 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է: *(կցվում է որոշում N 100-Ա)*

ԼՍԵՑԻՆ

40. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՎԵՑԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՉՈՐՐՈՐԴ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ԵՎ ԺԱՄԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՀԵՆՐԻԿ ԳԱՍՊԱՐՅԱՆ)

Կողմ-20 Դեմ-0 Ձեռնպահ-0

Հարցի քվեարկությունից հետո ավագանու անդամ Լուսինե Սանոյանն առաջարկեց հաջորդ նիստի օրը տեղափոխել մայիսի 16-ին և ուրբաթ օրերին նիստի օր չսահմանել՝ աշխատանքային ծանրաբեռնվածության պատճառով:

Նիստը վարողը առաջարկեց այս նիստի օրը թողնել անփոփոխ, քանի որ քվեարկությունն արդեն ավարտվել է և հաջորդիվ նկատի ունենալ տիկին Սանոյանի նկատառումը: Իսկ ավագանու անդամ Կարեն Սոսյանն առաջարկեց հարցը կրկին դնել քվեարկության՝ հաջորդ նիստի օր սահմանելով 2024 թվականի մայիսի 16-ը: Առաջարկն ընդունվեց և քվեարկության դրվեց լրամշակված նախագիծը:

Որոշումն ընդունված է: *(կցվում է որոշում N 101-Ա)*

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու վեցերորդ նստաշրջանի հերթական չորրորդ նիստի գումարման օր և ժամ սահմանել 2024 թվականի մայիսի 16-ը՝ ժամը՝ 12:00:

Որոշումն ընդունվեց:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանի

Վ.Սամսոնյան_____

Գ.Մելիքյան_____

Լ.Սանոյան_____

Մ.Սահակյան_____

Տ.Հովհաննիսյան_____

Ա.Հովհաննիսյան_____

Թ.Համբարձումյան_____

Ն.Պողոսյան_____

Գ.Պասկևիչյան_____

Խ.Վարաժյան_____

Ս.Հովհաննիսյան_____

Հ.Ասատրյան_____

Ս.Խուբեսարյան_____

Ա.Բեյբուտյան_____

Ա.Պապիկյան_____

Ք.Հարությունյան_____

Ե.Խանամիրյան_____

Ն.Ղազարյան_____

Ա.Մաթևոսյան_____

Զ.Միքայելյան_____

Շ.Արամյան_____

Լ.Մուրադյան_____

Հ.Ստեփանյան_____

Գ.Մանուկյան_____

Կ.Սոսյան_____

Ս.Ադամյան_____

Կ.Մալխասյան_____

Ն.Միրզոյան_____

Հ.Մարգարյան_____

Վ.Հակոբյան_____

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՐԴԳԵՍ ՍԱՄՍՈՆՅԱՆ

ք.Գյումրի
«12» ապրիլի, 2024 թվական